Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԳՑ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 4. Գեղարքունիքի մարզ-ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.-30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
15:37:35 AMST

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 46 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 6 դեպքի վարում (ՄՍԾՏԿ-ում փաստագրում, նոր անձնագրի ձեռքբերման կազմակերպում, մարզպետարանի և համայնքապետարանի կողմից ֆինանսական աջակցության տրամադրման կազմակերպում, անվճար բուժհետազոտության կազմակերպում), 28 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ: Համապատասխան աշխատանքներ են տարվել Արցախից բռնի տեղահանված տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային կենտրոնում ընդգրկման և համայնքում վերջիններիս ինտեգրման նպատակով:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված և ակտիվացնող խաղերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 4 խմբակ՝ երգ-երաժշտության, գեղարվեստական գրականություն և ասմունք, տեղեկատվական, ձեռագործություն և շյուղագործություն, որոնց մասնակցել է 46 շահառու:
  Կազմակերպվել է թվով 6 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 46 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝
  - ✓ Շահառուի ծննդյան տարեդարձի նշում,
  - ✓ Մայրության եւ գեղեցկության օր,
  - ✓ Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակության օր,
  - ✓ Հաղթանակի օր,
  - ✓ Հայաստանի առաջին հանրապետության օր,
  - ✓ Երեխաների պաշտպանության միջազգային օր:
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 11 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 21)՝ ուղղված մանր մոտորիկայի զարգացմանը, խմբային ինտեգրմանը, խմբային աշխատանքի հմտությունների ձեռքբերմանը, կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարմանը, կոգնիտիվ ֆունկցիաների զարգացմանը:

- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 2 շահառու օգտվել է լվացքի տրամադրման ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Վարսավիրական ծառայությունների մատուցում Սևանի կենտրոնի շահառուներին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uhqqy),
- Սուրբ Զատկի տոնին նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uhqvb և https://shorturl.at/M5ky4),
- Երգ- երաժշտության խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uhqxo),
- Շահառուների ծննդյան տարեդարձին նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uhrcl),
- Ձեռագործության խմբակի աշխատանքներ (տե՛ս հետևյալ հղմամբ https://shorturl.at/PskRM և https://shorturl.at/gRi97),
- Հոգեբանական խմբային աշխատանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/1Wu8W):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնի պատասխանատուները և սոցիալական աշխատողները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» կազմակերպության կենտրոնական գրասենյակի կողմից «Դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով Երևանում կազմակերպված վերապատրաստմանը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 46/45 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 36 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 7 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 6 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 38 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 38 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 31 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 10 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 46 |
| 5.1 | Նշել խմբակի անվանումը ՝ձեռագործություն | 19 |
| 5.2 | Նշել խմբակի անվանումը՝ գեղ. գրականություն | 20 |
| 5.3 | Նշել խմբակի անվանումը՝ տեղեկատվական | 11 |
| 5.4 | Նշել խմբակի անվանումը՝ երգ, երաժշտություն | 11 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 46 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | - |
| 7. | Այլ ծառայություն (նշել) լվացքի ծառայություն | 2 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «08» 07. 2024թ

(ստորագրություն, անուն, ազգանուն)